



Վարիթանգ Անանյան

Աիր

(Բնասերի հուշատետրից)

Ի՛նչ շողշողուն մրգեր կան Սև ծովի ափին... Աշնանը հանգստանում էինք Սուխումիում, Գասպար քեռու տանը և ամեն օր վայելում հյուրասեր տանտիրոջ տնամերձ այգու պտուղները: Այգին տարածվում էր լեռան ստորոտում, իսկ նրանից վեր՝ կանաչ անտառն էր ուղղահայաց բարձրանում մինչև ամպերը, մինչև ծեր Կովկասի ճերմակ գագաթները: Ի՛նչ փարթամ, ի՛նչ պտղաբեր երկիր է. այստեղ ժայռերն անգամ պատած են պտղատու ծառերով: Ա՛յ, մրգի աշխարհ:

Ափսո՛ս որ իմ խանձված ու մերկ երկրի համն, ու հոտը չունեն այս շքեղ երկրի շքեղ պտուղները:

Գասպա՛ր քեռի, չնեղանաս, ինչո՞ւ են անհամ ձեր մրգերը...

Ինչի՞ պիտի նեղանամ որ: Ինչ ճիշտ է, ճիշտ, ձեր երկրի միրգը ուրիշ համ ունի:

Թեթևացա: Ուրեմն ինձ չի թվում, այլ իրոք այդպես է:

Արև՛ը, արև՛ը... Երևանի արևը, որ այստեղ լիներ, մեր միրգն էլ ձերի նման կլիներ:

Այո՛, արևն է աղբյուրը բոլոր այն բույրերի, որից արբենում ենք մենք: Բայց մի՞թե միայն արևը:

Այդ խնդիրով էր զբաղված բնասերի իմ միտքը, երբ հաջորդ տարին Խոստայում ավելի դժվար հարցի դեմ առա:

Այսքան անձրևների, այսքան առատ ջրի մեջ ինչո՞ւ են ցամաք այստեղի մրգերը, մի անգամ դիմեց ինձ իմ ընկեր

Հրաչ Քոչարը, ձեռքի կիսատ խնձորին տարակուսանքով նայելով:

Բնասեր ես, դե բացատրի՛ր... Այո , մեր Դավմայի քարքարոտ հողում տանձենիներ են բուսնում, որոնց պտուղը կծելուն պես ջուր է ցայտում: Կա՞ ավելի հյութեղ պտուղ, քան մեր Արարատյան երկրի խանձված ու քարքարոտ վայրերի պտուղը: Դե՛, եկ պատասխան տուր հարցասեր ընկերոջդ՝ այստեղ պակաս է ջուրը, ամեն ինչ խանձվում է հարավի արևի տակ, բայց պտուղները հյութեղ են, իսկ այնտեղ Սև ծովը տարին–տասներկու ամիս անձրև է թափում Կովկասի լանջերին, ծառերը ջրվում են լիովի և տալիս... անհյութ ու ցամաք տանձ ու խնձոր:

Արտաշատից վերև որս են փնտրում մերկ բլրի լանջին. այստեղ դաշտահավեր են լինում: Մի փորող մեքենա հոնդոցով լայնացնում է բլրին գոտի կապած հին առվի հունը, իսկ նրա ետևից վրա են տալիս սաթի նման սև սերմնագոռավները, որդեր են փնտրում ընդերքից հանված թարմ հողի մեջ:

Ցած իջա, հրացանիս տեսքից թռչունները թռան սարսափահար: Նայում են առվի հատակից հանված թարմ տիղմին ու գարմանքով ծառի արմատի կտորտանքներ նկատում նրա մեջ: Մոտերքում ծառ չկա, թուփ չկա: Չէ՛, ինչպե՞ս չկա, վերելվում բլուրը մի կրծքախորշ ունի իր մեջ և այդ խորշում կույշ է եկել մի գաճաճ տանձենի: Բայց մի՞թե նրա արմատներն այս տեղ են հասել, ախր տանձենին հեռու է: Տնտեցի արմատի կտորտանքը՝ տանձենի են: Ահա ջրանցքի պատին ջլատված ու ցցված են վերևից ցած մեկնված արմատների ծայրերը: Այո՛, տանձենին է ուղարկել վերևից, ուղարկել է ջուր բերելու իր համար, իր պտուղների համար...

Բարձրացել են վեր, նայում են տոթից, երաշտից կարճ մնացած, ճյուղերը ծուռ ու մուռ տարածած ծառին, որն իր հասակին անհամեմատ խոշոր արմատներ ունի և

չափազանց մանր, կոշտ ու սուր–սուր տերևներ: Ջննում են ու մտածում:
Մտածում են ու հետզհետե քանդվում է ինձ գբաղեցնող հանելուկի կծիկը: Ամեն
ինչով այս բույսը համարվել է քարքարոտ ու շոգ տեղանքին, հարմարվել է, որ
ապրի: Լայն ու խորը տարածված այս այլանդակ արմատները նրա համար են,
որ այս պապակ ու աղքատ վայրից ջուր հայթայթեն մայր ծառին:

Մեր Դիլիջանի անտառներում վիթխարի հաճարենիներ կան, որոնք այս թզուկ
ծառի արմատների կեսն էլ չունեն, դե, ինչների՞ն է հարկավոր, այն խոնավ
սևահողում առատ է և ջուրը, և՛ սնունդը: Տանձենին փշեր չի ունենում, սա
փշփշոտ է, որ քիչ ջուր գոլորշիացնի: Նեղ են տերևները և կոշտ շերտով
պատած, նույնպես ներքևից դժվարությամբ ստացած ջրի չնչին քանակը իր
ներսում պահպանելու «ձգտումից» է: Իսկ պտուղները: Հաստ և կոշտ կեղև
ունեն դրանք, բայց երբ կծում ես՝ հյութը դուրս է ցայտում, քաղցր ու համեղ
հյութը:

Եվ այդտեղ մի միտք փայլատակեց գլխումս, մի շատ կարևոր միտք: Ափսո՛ս,
մարդ չկա մոտս, որ բարձր ասեմ. ախր երաշտի ահն է ստիպում այս ծառին ջուր
կուտակել իր պտուղների մեջ, այս ծարավ վայրում ծարավ մնալու ահր...

Հիմի հասկացա՞ր, Հրաչ Քոչար, թե ինչու ցամաք պիտի լինեն ծովափի տանձն
ու խնձորը: Նրանց համար ջուրը, հյութը ավելորդ է բեռ է, քանի որ միշտ կարող
են ջուր վերցնել այնքան հաճախ տեղացող անձրևներից: Մեր չոր ու պապակ
երկրում, երբ ամառը վերևից Արևը կրակ է թափում՝ ամեն բույս ու ծառ «ահի»
մեջ է: Ահ, իր կյանքի համար, իր սերունդների կյանքի համար: Եվ այդ «ահր»
ստիպում է նրան հյութեր կուտակել պտուղների մեջ և այդ հյութերը պատել կոշտ
պատյաններով, որ կիզիչ արևը չկարողանա նրանից խլել այնքան
դժվարությամբ ձեռք բերված հյութը...

Դրանից են այդքան համեղ ու հյութեղ մեր արևոտ ու չոր երկրի պտուղները: